# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈՒԲԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

28.05.2015



Սիրելի՛ հայրենակիցներ

Շնորհավորում եմ ձեզ  համազգային կարևորություն ունեցող այս օրվա՝ Հանրապետության տոնի կապակցությամբ:

Թող, որ անսասան հավատից, անկոտրում կամքից ու հաստատուն պայքարից ծնված այս տոնը հանդիսանա հայ ժողովրդի  լուսեղեն ապագայի, մեր երկրի ամրակուռ սահմանների ամրապնդման ու հզոր հայրենիքի կառուցման պատվանդանը:

Մաղթում եմ, որ տոկունությունը, ամուր հավատն ու հայրենասիրությունը  ուղեկցեն մեր ժողովրդին և հաջողություններ պարգևեն  բոլոր ձեռնարկումներում:

Հանրապետության տոնը վստահաբար կարելի է համարել մեր ժողովրդի դարավոր ու բաղձալի երազանքի  իրականացման օր, որի գոյությունը նոր լիցքեր հաղորդեց հայոց պատմության ընթացքին ու համայն աշխարհին ներկայացրեց հայ տեսակի ազատատենչ ոգու ինքնատիպ առկայծումները:

Դարձյալ շնորհավորում եմ և մաղթում ամենայն բարիք:

**Արարատի մարզպետ**

**Ռ. Աբրահամյան**